Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
նոյեմբերի 30-ի նիստի N 50
արձանագրային որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ

I. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

1. Սույն հայեցակարգում ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում անտառային ոլորտի բարեփոխման հիմնական սկզբունքներն ու քաղաքականությունը: Հայեցակարգը մասնավորապես անդրադառնում է՝

1) Հայաստանի Հանրապետության անտառային ոլորտում առկա խնդիրներին,

2) անտառների և անտառային հողերի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կառավարման համակարգի կատարելագործմանը, կայուն կառավարման խնդիրներին,

3) անտառների և անտառային հողերի պահպանության, ինչպես նաև ապօրինի հատումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման հետ կապված խնդիրների լուծմանը:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. Հայեցակարգը մշակվել է ի կատարումն «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «3.5 Գյուղատնտեսություն» բաժնի 13-րդ կետի «1-ին» ենթակետի և ուղղված է անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման վիճակի բարելավմանը:

3. Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո անտառային ոլորտի կառավարում իրականացնող կառույցների շարունակական փոփոխությունները չեն ապահովել պետական գործառույթների համակարգման և տարանջատման արդյունավետ իրականացումը, որի արդյունքում երբեմն հետապնդվել են միջգերատեսչական շահեր, բավարար չափով չեն կանխարգելվել ապօրինի գործողությունները և արդյունավետ կերպով չեն ապահովվել միջազգային չափորոշիչներով բազմանպատակ և կայուն անտառօգտագործումը:

4. Հայաստանի Հանրապետությունում քայքայված անտառային ռեսուրսների վերականգնումը, անտառածածկ տարածքների ավելացումը, անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական նշանակության գործառույթների պահպանումն ու զարգացումը, պաշարների շարունակական և արդյունավետ

օգտագործումը ներկայումս համարվում են գերակա խնդիրներ, որով էլ պայմանավորված է ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը:

III. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

5. Հայաստանի Հանրապետության անտառները և անտառային հողերը 1993 թվականի անտառների պետական հաշվառման (վերջին հաշվառում) արդյունքներով կազմում է 460 հազ. հեկտար, որից 334.1 հազ. հեկտարն անտառածածկ տարածքներ են հանրապետության տարածքի շուրջ 11.2 %-ը՝ (այս տվյալները չեն ընդգրկում հետագա տարիներին անտառային տարածքներում տեղի ունեցած փոփոխությունները): Համաձայն 2011 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Հայաստանում կենսաբազմազանության ինտեգրված կառավարում» ծրագրի կողմից հեռահար զոնդավորման մեթոդով ստացված տվյալների, Հայաստանի անտառածածկի մակերեսը կազմում է 332.333 հազար հեկտար կամ երկրի ընդհանուր տարածքի շուրջ 11.17 %-ը:

6. Հայաստանի պետական անտառները հիմնականում կառավարում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության (շուրջ 75 %) և Հայաստանի Հանրապետության բնապահպանության (շուրջ 25 %) նախարարությունները:

IV. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

7. Անտառային ոլորտի առաջնահերթ խնդիրներից են.

1) անտառային օրենսդրության կիրարկման համար ինստիտուցիոնալ դաշտի հստակեցումը,

2) անտառների պահպանության և ապօրինի անտառօգտագործումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը,

3) մարդկային (մասնագիտական) կարողությունների և ոլորտային հզորությունների զարգացումը,

4) անտառային տնտեսության զարգացումը,

5) առկա կառավարման և տնտեսվարման գործառույթներ ունեցող ինստիտուցիոնալ միավորների օպտիմալացումը,

6) անտառապատման և անտառավերականգնման ծավալների ընդլայնումը,

7) հանրապետությունում վառելափայտի բարձր պահանջարկի առկայությունը,

8) ոլորտի ֆինանսական ռեսուրսների բարելավումը և կայունացումը:

8. Սույն հայեցակարգի նպատակն է կայունացնել, հստակեցնել, կատարելագործել և զարգացնել Հայաստանի Հանրապետության անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում միջազգային սկզբունքներին համահունչ կայուն կառավարման համակարգը, բարձրացնել ապօրինի

հատումների դեմ պայքարի արդյունավետությունը, ապահովել էկոհամակարգային մոտեցմամբ համապարփակ կառավարումը:

V. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

9. Տնտեսության անցումային փուլում գտնվող Արևելյան Եվրոպայի երկրներում աղքատության կրճատման, ընդհանուր տնտեսական զարգացման համակարգին անտառային ոլորտի ինտեգրման և անտառի գլոբալ նշանակության պահպանման խնդիրների լուծումը կախված է արդյունավետ ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումներից, որը պետք է նպատակաուղղված լինի բազմանպատակ և կայուն անտառկառավարմանը:

10. Անտառային ոլորտում պետության կանոնակարգող, սեփականության, վերահսկող և աջակցող գործառույթներն իրականացնում են քաղաքականության, օրենսդրության, օրենքների կիրարկման, կառավարման, անտառտնտեսվարման, ծառայությունների մատուցման և շուկայական հարաբերությունների միջոցով:

11. Եվրոպական երկրների կառավարման կառուցվածքային մոդելների վերլուծությունը ցույց է տալիս, որ թե՛ զարգացած, և թե՛ անցումային տնտեսության երկրներում գոյություն չունեն անտառային տնտեսություն վարող այնպիսի կառուցվածքներ, որոնք կարող են միանշանակ ընդունելի լինել այլ երկրների համար: Դրանց արդյունավետ գործունեության հիմնական չափանիշներ են համարվում տվյալ երկրի անտառածածկը, շուկայական բարեփոխումների ընթացքը և խորությունը, անտառային արտադրական ոլորտի կառուցվածքը և սեփականության ձևերի առկայությունը, որոնք նույնատիպ չեն տարբեր երկրներում:

12. Կառուցվածքային մոդելները հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի՝ կենտրոնացված ուժեղ կառավարման և ապակենտրոնացված առևտրայնացված համակարգեր: Որոշ դեպքերում առկա են բյուջետային ֆինանսավորմամբ անտառային ոլորտի համակարգի կառավարման պետական ծառայություններ, որոնք ձևավորում են քաղաքականություն և օրենսդրական հիմք, իրականացնում կառավարում, տնտեսվարում և վերահսկողություն, իսկ անտառտնտեսվարումից և ծառայությունների մատուցումից ստացվող միջոցներն ամբողջությամբ վերադարձվում են պետական բյուջե:

13. Ժամանակակից կայուն անտառկառավարումը հիմնված է տեղական, տարածաշրջանային, ազգային և գլոբալ մակարդակներում բնապահպանական, կլիմայական, սոցիալական և տնտեսական պահանջմունքների բավարարման հիման վրա, որը պետք է համահունչ լինի սերունդների համերաշխության սկզբունքներին:

14. Անտառային ոլորտի միջազգային ֆինանսավորումն էական դեր է խաղում անտառների կայուն կառավարման ապահովման համար, գլոբալ միջազգային դրամաշնորհներն անտառային ոլորտում գերազանցում են հարյուր միլիոնավոր դոլարները, ստեղծվում են նոր գործիքներ, տեխնոլոգիաներ և մեթոդներ անտառների կայուն կառավարումն ապահովելու նպատակով:

15. 2015 թվականին ՄԱԿ-ի կողմից ստեղծված անտառների գլոբալ ֆինանսավորման համակարգային ցանցի (UNFF GFFFN) նպատակն է կենտրոնացնել և համակարգել ֆինանսական, տեխնիկական, գիտական ռեսուրսների հասանելիությունը՝ մասնավորապես փոքր անտառային տարածքներ ունեցող երկրների համար:

VI. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

16. Հայաստանի Հանրապետության անտառների (այդ թվում բնության հատուկ պահպանվող տարածքներում գտնվող անտառների) կառավարումն իրականացնել անտառների պահպանության գերակայության սկզբունքով՝ ապահովելով սոցիալական ու տնտեսական պահանջմունքների և կլիմայական ու բնապահպանական պահանջների հավասարակշռումը: Անտառների կառավարման պետական լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունն է:

17. Հայաստանի Հանրապետության անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և կայուն օգտագործման բնագավառում պետական միասնական քաղաքականության մշակման, ներդրման և իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կառուցվածքում ձևավորել անտառների պետական կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) և անտառների, բնության հատուկ պահպանվող տարածքների, ինչպես նաև կենսաբազմազանության և կենսաանվտանգության քաղաքականության վարչություն: Կոմիտեի կառավարման ներքո «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորման միջոցով ստեղծել անտառային տնտեսությունները վարող պետական ոչ առևտրային կազմակերպություններ և ձևավորել անտառների պատշաճ պահպանությանը նպատակաուղղված պարեկապահակային գործառույթներ իրականացնող անտառային պետական ծառայություն:

18. ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կառուցվածքում առաջարկվող կառուցվածքային փոփոխություններն իրականացնել ՀՀ բնապահպանության և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների աշխատակազմերում առկա հաստիքների հաշվին, իսկ կոմիտեի և անտառային պետական ծառայության, ինչպես նաև համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծումը՝ «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության հաստիքների հաշվին:

19. Անտառային ոլորտի բարեփոխումները կիրականացվի 3 տարվա ընթացքում՝ ինստիտուցիոնալ օրենսդրական բարեփոխումների, ինչպես նաև կառուցվածքային/կազմակերպչական զարգացման միջոցով:

VII. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Առաջարկվող լուծումների արդյունքում՝

1) անտառկառավարման ոլորտում հստակեցվում և տարանջատվում են վերահսկողական, հսկողական, անտառկառավարման, տնտեսավարման և պահպանության գործառույթները,

2) կառավարող և տնտեսվարող մարմինների կառուցվածքներն օպտիմալացվում են, մեծանում է տնտեսվարող կազմակերպությունների ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և աշխատանքի տնտեսական արդյունավետության բարձրացման ուղղությամբ շահագրգռվածությունը,

3) բարձրանում է անտառների ապօրինի օգտագործման դեմ պայքարի արդյունավետությունը, հստակեցվում է պատասխանատուների շրջանակը,

4) բարձրանում է անտառային ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության և նրանց կողմից ներդրումների արդյունավետությունը,

5) հստակեցնելով, կատարելագործելով և զարգացնելով հանրապետության անտառների կառավարման համակարգը ու անցում կատարելով անտառների բնապահպանական, տնտեսական և սոցիալական գործառույթների հավասարակշռված քաղաքականության վարմանը, ինչպես նաև անտառօգտագործման բնափայտի մթերման գերակշռող տեսակի փոխարինումը բազմանպատակային օգտագործմամբ՝ անտառային համակարգը կայունացնելու, երկարատև ներդրումներ կատարելու և լրացուցիչ եկամուտներ ապահովելու գրավականը կլինեն,

6) համակարգի արդիականացման արդյունքում կնվազի ֆինանսական ծախսերը, կբարելավվի կառավարման արդյունավետությունը:

VIII. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

21. Հայեցակարգի ներդրումը լրացուցիչ բյուջետային ծախսեր չի պահանջելու, իրականացվելու է առկա ռեսուրսների շրջանակներում: Պահանջվող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորումն ապահովվելու է հիմնականում միջազգային ծրագրերի միջոցով:

IX. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

22. Հայեցակարգում առաջարկվող լուծումները հնարավորություն կտան իրականացնելու անտառային ոլորտի բարեփոխումներ, որոնք բխում են նաև անտառի ազգային քաղաքականության և ռազմավարության, ինչպես նաև անտառի ազգային ծրագրի հիմնադրույթներից և ուղղորդված են անտառների կայուն կառավարման, տնտեսվարման և հսկողության արդյունավետ համակարգի ստեղծմանը:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
նոյեմբերի 30-ի նիստի N 50
արձանագրային որոշման

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Անտառային ոլորտի բարեփուխումների հիմնական խնդիրներից են անտառների և անտառային հողերի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում արդյունավետ կայուն կառավարման համակարգի ստեղծումը, անտառային էկոհամակարգերի կայունության վրա կլիմայի փոփոխության, մարդածին գործոնների բացասական ազդեցության վերացումը կամ մեղմումը, անտառածածկ տարածքների ավելացումը, տեսակային կազմի բարելավումը, ապօրինի հատումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը, անտառային օրենսդրության մեխանիզմների կիրարկման ապահովումը, ոլորտում որակյալ մասնագետներով ապահովումը, անտառների պահպանության կարողությունների և կառավարման կառուցվածքային միավորների հզորացումը:

2. Անտառային ոլորտի բարեփոխումները փուլային գործողություններ ներառող միջոցառումների համալիր է:

II. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Անտառային ոլորտի բարեփոխումների ռազմավարության հիմնական նպատակներն են Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կառավարման համակարգի կատարելագործումը, ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացումը, ռազմավարական ուղիների ապահովումը:

III. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Անտառային ոլորտի բարփոխումներն անհրաժեշտ է իրականացնել 3 տարվա ընթացքում՝ հետևյալ ուղղություններով.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N 7-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու միջոցով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը ճանաչել որպես անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և կայուն օգտագործման բնագավառում լիազորված պետական մարմին.

2) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության համակարգին փոխանցել «Հայնտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի N 1237-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով վերանայել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների կանոնադրությունները՝ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և կայուն օգտագործման բնագավառում լիազորությունների հստակեցման նպատակով, և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմում ստեղծել անտառների, բնության հատուկ պահպանվող տարածքների, ինչպես նաև կենսաբազմազանության և կենսաանվտանգության քաղաքականության վարչություն.

4) Կոմիտեի ստեղծում, այդ նպատակով համապատասխան իրավական ակտի ընդունում: Կոմիտեի կազմում անտառային պահպանության պետական ծառայության ստեղծում.

5) «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպում՝ «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի վերակազմակերպման արդյունքում ստեղծել անտառտնտեսություն պետական ոչ առևտրային կազմակերպություններ,

6) Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի վերանայում,

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 30-ի N38 արձանագրության 22-րդ կետով հավանության արժանացած որոշման վերանայում,

8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1232-Ն որոշման վերանայում,

9) Անհրաժեշտության դեպքում այլ իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարում.

10) Կարողությունների զարգացում (ուսուցման ծրագրերի մշակում և դասընթացների շարունակական իրականացում, այդ թվում անտառի պահպանության, հատումների, վերականգնման, պաշտպանության պլանավորման և իրականացման բնագավառներում).

11) Անտառկառավարման տեղեկատվական համակարգի շարունակական զարգացում.

12) Անտառների որակական և քանակական ցուցանիշների վերաբերյալ առաջնային տեղեկատվության վերհանում, գործողությունների պլանավորում և մոնիթորինգի համակարգի շարունակական զարգացում (հեռահար զոնդավորման և աշխարհատեղեկատվական համակարգի կիրառման (ԱՏՀ), դաշտային ուսումնասիրությունների իրականացում).

13) Պահպանության նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների օգտագործում, տեսախցիկների համակարգի ներդրում, փայտանյութի (անտառներում և անտառից դուրս) տեղափոխման նկատմամբ հսկողության և վերահսկողության միջոցառումների ուժեղացում.

14) Անտառօգտագործման ոլորտի նորագույն տեխնոլոգիաների և սարքավորումների ներմուծում և դժվարահաս անտառների օպտիմալ օգտագործում:

5. Սույն ռազմավարության շահառուներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության բնակչությունը:

6. Սույն ռազմավարությամբ նախատեսված գործողություններն ապահովող միջոցառումների ղեկավարումն իրականացնելու է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը:

7. Սույն ռազմավարության իրականացման ռիսկեր են հանդիսանում՝

1) անհրաժեշտ նյութատեխնիկական, ֆինանսական և մասնագիտական ռեսուրսների սղությունը,

2) անտառային ոլորտում կառավարման և տնտեսվարման գործընթացների բացասական իներցիան,

3) անտառների որակական և քանակական ցուցանիշների վերաբերյալ անբավարար առաջնային տեղեկատվությունը:

IV. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

8. Ռազմավարության իրականացման ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ֆինանսական միջոցները:

9. Առանձին գործողությունների, նյութատեխնիկական բազայի ապահովման, ինչպես նաև ուսուցման, վերապատրաստման ծրագրերի իրականացման համար ֆինանսավորման աղբյուր կարող են հանդիսանալ միջազգային դրամաշնորհային ծրագրերը:

V. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

10. Ռազմավարության կատարողականի ցուցանիշներ են հանդիսանալու.

1) անտառների ապօրինի օգտագործման դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը, մասնավորապես ապօրինի հատումների ծավալի նվազեցում,

2) անտառային ոլորտում կառավարման համակարգի բարեփոխում, կառավարման արդյունավետության բարձրացում,

3) փայտանյութի իրացումից ստացվող եկամտի աճ,

4) ոլորտում տնտեսական գործունեության զարգացման համար ներդրումների ներգրավում, ըստ նպատակային նշանակության անտառների օգտագործման ծրագրերի իրականացում:

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2017 թ.
նոյեմբերի 30-ի նիստի N 50
արձանագրային որոշման

Ց Ա Ն Կ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Ակնկալվող արդյունքը
1	Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N7-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մշակում, և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N1516-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի N1237-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացում	Իրավական դաշտի կիրարկման ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017 թվականի դեկտեմբեր-2018 թվականի հունվար	Ֆինանսավորում չի պահանջվում	Անտառային ոլորտում պետական կառավարման լիզորված մարմնի իրավասությունների սահմանում և հստակեցում

2	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության համակարգում կոմիտեի ստեղծման վերաբերյալ իրավական ակտը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացում	Անտառների կառավարում և պահպանություն	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017 թվականի դեկտեմբեր-2018 թվականի հունվար	Ֆինանսավորում չի պահանջվում	Անտառների կառավարման և պահպանության արդյունավետության բարձրացում, ոլորտում լիազորությունների տարանջատում և հստակեցում
3	«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի վերակազմակերպման արդյունքում անտառտնտեսություն պետական ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման վերաբերյալ իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացում	Անտառային տնտեսությունների վարում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017 թվականի դեկտեմբեր-2018 թվականի հունվար	Ֆինանսավորում չի պահանջվում	Անտառային տնտեսության վարման արդյունավետության բարձրացում, ոլորտում լիազորությունների տարանջատում և հստակեցում
4	Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացում	Օրենսդրական բարեփոխումներ	ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թվականի սեպտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում	Անտառային ոլորտի բարեփոխումները բխում են նաև Հայաստանի Հանրապետության Անտառային օրենսգրքի պահանջներից և համահունչ են միմյանց

5	Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի N 38 արձանագրության 22-րդ կետով հավանության արժանացած որոշման մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացում	Անտառային ոլորտի բարեփոխումների բխեցումը նաև անտառի ազգային քաղաքականությունից	ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թվականի դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում	Անտառի ազգային քաղաքականության կարգավորում, հարմարեցում ներկա պահանջներին
6	Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N1232-Ն որոշման մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացում	Համապատասխանեցնել ներկա պահանջներին և վերանայված քաղաքականությանը	ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թվականի դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում	Անտառի ազգային ծրագրից բխող գործողությունները համապատասխանում են ներկա պահանջներին
7	Փոփոխությունների հետ կապված այլ նորմատիվ իրավական ակտերի վերանայում	Իրավական դաշտի կիրարկման ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թվականների դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում	Անտառային ոլորտում պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունների սահմանում
8	Անտառային ոլորտի աշխատակիցների համար ուսուցման ծրագրերի մշակում, դասընթացների շարունակական իրականացում և նորագույն տեխնոլոգիաների կիրառում	Կազմակերպչական և մասնագիտական կարողությունների զարգացում և հզորացում	ՀՀ բնապահպանության նախարարություն Անտառային պետական կոմիտե	2018-2021 թվականների դեկտեմբեր	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Բարելավված մասնագիտական կարողություններ
9	Անտառկառավարման տեղեկատվական համակարգի շարունակական զարգացում	Տրամադրել տեղեկություններ գործառնական	ՀՀ բնապահպանության նախարարություն	2018-2021 թվականների դեկտեմբեր	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Պարբերաբար թարմացվող առաջնային

		պլանավորման և իրականացման համար	Անտառային պետական կոմիտե			տեղեկատվության առկայություն
10	Անտառների որակական և քանակական ցուցանիշների վերաբերյալ առաջնային տեղեկատվության վերհանում, գործողությունների պլանավորում և մոնիթորինգի համակարգի շարունակական զարգացում	Անտառներ կառավարում բնական միջավայրին համահունչ	ՀՀ բնապահպանության նախարարություն Անտառային պետական կոմիտե	2018-2021 թվականների դեկտեմբեր	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Անտառային տնտեսության կայուն կառավարում
11	Պահպանության, նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում	Անտառների արդյունավետ պահպանության կազմակերպում	ՀՀ բնապահպանության նախարարություն Անտառային պետական կոմիտե	2018-2021 թվականների դեկտեմբեր	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Ապօրինի անտառօգտագործման նվազում, կանխարգելում
12	Անտառօգտագործման ոլորտի նորագույն տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրում	Անտառային ռեսուրսների արդյունավետ օգտագործում	ՀՀ բնապահպանության նախարարություն Անտառային պետական կոմիտե	2018-2021 թվականների դեկտեմբեր	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Միավոր տարածքից առավելագույն եկամտի ստացում